




ՈՉ-ՇԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՐՄԱԹԵՐԹ

A V E D A R A N I T S A I N

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Ը. ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ—ՓԵՏՐՈՒԱՐ 1946 ԹԻՒ 1—2



ՏՐՈՖԻՄՈՐ Ս. Կ. ԽԱՂԱՏՈՒՐԵԱՆ

1879 — 1945

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՃԱՐԸ

Պաշտամունքի վայր է հոն ուր Աստուած՝ իր վեհափառութեամբը, և մարդ՝ իր խոսարհութեամբը իրարու կը հանդիպին։ Այսպէս, տունդ կրնայ տաճարդ ըլլալ, կամ, ինչպէս Սամարացի կոչվ պարագային, աղբիւրի մը գլուխը, կամ, ծառի մը տակ, կամ, գիշերուան խորհրդաւոր լռութիւնը — տեղ տեղ, սակայն միշտ նոյն պայմանաւ։

Աստուած իր ձեռակերտ տաճարները ունի և անոնց մէջ կ'ապրի և կը յայտնուի անվրէպ։ Այդ տաճարները բնութեամբ մէջ են։ Մարդիկ յաճախ իրենց շինածը գրած են Աստուծոյ շինածին տեղ։ Քաղաքակրթութիւն արդէն կը նշանակէ այս փոխանակութիւնը ընել — բնականին տեղ արուեստականը դնել, աստուած սկերտին տեղ՝ մարդակերտը։ Այս փոխանակութիւնը՝ եթէ անխուսափելի եղած է, չենք կրնար ըսել թէ միշտ ալ նախընտրելի եղած է։ Քաղաքակրթութիւնը իր նիւթական հագուստին մէջ տեսակ մը ըմբոստութիւն է Աստուծոյ դէմ, գէթ մրցակցութիւն։ Անոր հետ նիւ Եօրքի երկնաբերձ չէնքերը լուսեայն կը յայտարարեն ամբարտաւանօրէն — «Մե՛ր վրայ նայեցէք, և հիացէք մարդոց գործերուն վրայ»։ Աստուծ մեր աչքը կը վրիպեցնեն աստուածակերտ, փառապան լեռներէն։ Քաղաքը մարդուն է, իսկ բնութիւնը՝ Աստուծոյն։ Աստուծոյ հրաւերն է «Զեր աչքերը դէպի լեռները վերցուցէք»։

Կը պատահի որ մարդակերտ տաճարին մէջ միակ պակասը Աստուած ըլլայ։ Կատարեալ չէնք այլ՝ թափուր՝ Աստուծոյ ներկայութենէն։ Որքա՛ն շատ են այն տաճարները որոնք սոսկ նիւթակամ կոթողներ են։ Աստուծոյ անուան, բայց ոչ թէ բնակարան Անոր կեցողանի ներկայութեան։

Բնութեան տաճարը տարբեր է։ Աստուած միշտ անոր մէջ է։ Հոն մըտ-

նողը յուսախաբ դուրս չգար։ Անպատճառ զիջատուած կը գտնէ անոր մէջ։ Աստուծոյ շունչովը լեցուած է ան։ Աստուծոյ շօշափելի փառքին պահարանն է ան։ Յիրաւի բնութիւնն է ան։ զուգական «մայր տաճարը»։ Ո՛վ կրնայ միթէ՛ չիմել գմբէթ մը որ այնքան զեղեցիկ է և լայնանիստ որքան բուն իսկ կապուտեանդ երկինքը որ կը ծածկէ Անոր տաճարը։ Լեռները այդ տաճարին խորխտ սիւներն են։ Անտառներով կաղմած է ան իր սուրբ խորանները։ Թռչուններն են Անոր փառաքանիները։ Գետերը կը գծեն Անոր տաճարին այն անցքերը որոնց վրայէն կը յառաջանան Անոր հրեշտակներուն թափօրները։ Աստուծոյ երկնային փառքը իր լրութեամբը կը յայտնուի բնութեան տաճարին մէջ։

Կիրակի մը, բնութեան զայնահային ժպիտին մէջ, Աստուծոյ հանդիպեցայ իր այս սուրբ տաճարին մէջ։ Ես ալ լսեցի «ձայնը»։ Տէր Աստուծոյ որ «աստուան զով աստենը պարտէզին մէջ կը պտտէր» — այն ձայնը ասկայն որ կ'օրհնէր։ Ազօթեցի, բայց ազօթքով խօսելէ աւելի լսեցի։ Սեղան չկար բայց «հաղորդութեամբ», զի կենդանի Աստուածը կար հոն։ Չոհագործութեան վայր մը չէր ան հապա՛ փառագործութեան վայր մը։ Արարհամի և Խառակի փորձառութեան իրականութեան հոգ, այդ օրը, վերահասու եղայ։ Երբ Աստուած իր փառքովը յայտնուի մարդու, չառնե՛ր անկէ, հապա կուտայ անոր։

Սողմոսը մարմին տաւ ինձ համար և փորձառական տրամայի մը վերածուեցաւ երբ կարգացի —

«Ով Տէր... փառք ու վայելչութիւն հագած ես, լոյսը հանդերձի պէս կը հագնիս, և երկինքը վարագոյրի պէս կը տարածես։ Անիկա իր վերնատունները ջուրերու վրայ կը չինէ, և ամպերը իրեն կառք կ'ընէ, և հովին թեւերուն վրայ կը պտտի»։ Եւ աղօթեցի... Ա. Ա. Գ.

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՉԱՅՆ

ՈԶ - ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿՍԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արտոնատէր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ — : — Propr: Rev. K. T. SARIAN

Խմբագիրներ՝ $\left\{ \begin{array}{l} \text{Վեր. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ} \\ \text{Վեր. Թ. ԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ} \\ \text{Պր. Կ. Յ. ԹՈՒՄԱՆԱՆ} \end{array} \right.$

Ը. ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ — ՓԵՏՐՈՒԱՐ 1946 ԹԻԻ 1-2

ԾՆՈՒՆԴ ԵՒ ԾԱԳՈՒՄ

Բոլոր մեղաւոր աշխարհը հետաքրքրող մէկ Ծնունդ կայ, ասկէ մօտաւորապէս քսան դարեր առաջ տեղի ունեցած աշխարհի մէկ անձանօր անկիւնը: Եւ այս Ծնունդը ամեն տարի կը տօնուի համայն քրիստոնէայ աշխարհի մէջ արժանաւայել շուքով մը:

Կրնայ անիկա սովորութիւն դարձած ըլլալ շատերուն համար եւ առիթ մը պարգապէս զայն գործածելու: Ճիւղական եւ եսասիրական նպատակներու: Սակայն առհասարակ անիկա երբեք չէ կորուսած իր հմայքն ու կարեւորութիւնը: Փրկուելու պէտք ունեցող (եւ մարդիկ անխտիր փրկուելու պէտք ունին) մարդ արարածներուն համար Քրիստոսի Ծնունդը յոյժ բարեղեպ դէպք մըն է, նկատելով որ մարդոց փրկութեան միակ յոյսը մարմնով Աստուածայայտնութիւնն էր: Անոր անունը Յիսուս է, որ կը նշանակէ փրկիչ, «*քանզի անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ*»:

Ի՞նչ պիտի ըլլար աշխարհի վիճակը, եթէ Ան չծնէր: Կարելի է սոյն հարցումին պատասխանել այլ հարցումով, թէ ի՞նչ պիտի ըլլար երկրագունդիս վիճակը եթէ երբեք չըլլար արեւը: Առանց արեւի աշխարհ մը երեւակայել դժուար չէ: Այդպիսի տեղ մը պիտի թեւածէր մահուան ստուերը միայն ցուրտ, տխուր եւ մօայլ:

Ասկէ տարբեր պիտի չըլլար հոգեկան աշխարհը եւ այդպէս էր արդեն, նախ քան ծագիլը մարդոց լիւրջ Արդարութեան Արեգակին: Անկէ ի վեր մարդկային ցեղի պատմութիւնը յեղաշրջուած է: Որովհետեւ Քրիստոսի լուսատու Աւետարանը կը քարոզուի եւ Քրիստոսի Աւետարանը չի հաւատար բարեշրջումի, այլ յեղաշրջումի: Ան դանդաղ գործ չի տեսներ, այլ յեղակարծ գործ: «Յղիցի լոյս, եւ եղեւ լոյս»:

Մեղքերու եւ յանցանքներու մէջ մեռած մարդու մը վրայ Փրկչին փրկագործութիւնը չկատարուիր տարիներու ընթացքին, այլ անմիջականօրէն:

Ժողովուրդներու կեանքին մէջ ալ կը տեսնուի փրկագործութեան սոյն յանկարծական արդիւնքը: Սէր ըսածը փաստելու համար պէտք չունինք եկեղեցական պատմութիւնը բոլորովն, կամ միոթօնարական անցեալի մէջ կատարած գործունեութիւնները պրպտելու: Շատ մը երկիրներ, ո՛ր որ մօտը գտած է Քրիստոսի Աւետարանը, սոյն սխալի յեղաշրջումը կատարած է:

Մասնաւորեմք մեր խօսքը ըսելու համար, թէ Աւետարանը յեղաշրջական միեւնոյն դերը կատարած է մեր հայ ազգին մէջ: Ռ'բրան կարն ատենուան մը մէջ, Լուսաւորիչեան ժամանակաշրջանին, Աւետարանը մեր հայ ժողովուրդը դարձուց կռապաշտութիւնէ նշմարիտ աստուածապաշտութեան:

Ինչ որ ամէն սրտցաւ հայու մը մէծ վիշտ կը պատճառէ, այն է՝ թէ Առաքելական Հայաստանեայց եկեղեցին չկրցաւ պահել իր պարգոյքինն ու մարքութիւնը. այլ բեռնաւորեց ինքզինքը յետսամուտ ծիսականութիւնով ու արարողականութիւնով. մինչեւ այն աստիճան, որ մեր նախահարց քարոզած փրկութեան մարտը Աւետարանը, որուն համար ալ անոնք անլուր ջարջարանքներու ենթարկուեցան, թաղուած մնաց ճեւղականութեան ներքեւ:

Եկեղեցիին սոյն յետադէմ ուղղութեան դէմ ԺԹ. դարուն սկիզբները, թէ՛ կղերականներու եւ թէ աշխարհականներու մէջ գոնուեցան Աւետարանով լուսաւորուած մարդիկ, որոնք համարձակեցան ծառանալու: Անոնց այս գնահատելի խիզախ դիրքը կրօնական իշխանութիւնները գայրացուց, եւ մղեց գնոնք սաստիկ հալածանք կատարելու, եկեղեցւոյն մէջ բայեկաբզութեան կարիքը պաշտպանողներուն դէմ:


Ժամանակ մը եղաւ, որ մարտը Աւետարանի հաւատարիմ մնացողներուն համար այս վիճակը անհանդուրժելի դարձաւ: Հետեւաբար անոնք, հակառակ եկեղեցիին մէջ մնալու իրենց բռն փափաքին, հարկադրուեցան բաժնուիլ եկեղեցիին եւ կազմել ուրոյն եկեղեցի մը հաւատացեալներու: Ասիկա ամենէն առաջ տեղի ունեցաւ 1 Յուլիս 1846ին, ի Կոստանդնուպոլիս:

Այս է յոյժ համառօտ պատմութիւնը Հայ Աւետ. եկեղեցւոյ կազմութեան, որ արդիւնքն էր Աւետարանական շարժումի մը հայոց մէջ, շարժում մը՝ վերադառնալու նախկին առաքելական դարուն մեզի աւանդուած պարզ եւ մարտըր աւետարանական սկզբունքներուն:

Քրիստոսի Ծնունդով աշխարհն ունեցաւ փրկիչ մը, Արդարութեան Արեգակը ծագեցաւ բոլոր մարդիկը լուսաւորելու: Անկէ ի վեր ամէն շարժում որ ծագում կ'առնէ սոյն փառաւոր դէպքէն՝ Քրիստոսի իբր փրկիչ Ծննդեան հետ աղերս ունի: Աւետարանական շարժումը հայոց մէջ ծագում առած է նոյն սկզբունքէն: Անգամ մը որ այս Փրկիչը ծնի մարդոց սրտերուն մէջ, կեանքեր կ'ենթարկուին իրական յեղաշրջումի:

Աւետարանական սոյն շարժումէն ի վեր հարիւրամեակ մը անցեր է, հիմնական փոփոխութիւններ յառաջացնելով հայ կեանքերէ ներս: Շարժումը աճած է եւ անդիմադրելիօրէն լառաջ գացած աննկատ անցնելով ամէն խոջ ու արգելք:

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ԱՄԱՆՈՐԻ



Դարձնալ կը կայնինք նոր տարուայ մը սեմին վրայ: Ամբողջ տարի մը եւս ոնցաւ, և այնպէս կը թուի թէ դեռ երէկ սկսեալ էինք զայն այն քան ուրախութիւնով, նոր բարեմաղթութիւններով և սրտագին շնորհաւորութիւններով: Նորածագ արշալոյսի մը նման էր այն որ արեւելեան հորիզոնին վրայ կը բոցալաւի իր պերճանքովն ու փառքովը, և այժմ անոր վերջին ճառագայթները, վերջին նշոյլներն են որ կը շիջանին: Ասցեալին մառախլապատ մթութեան մէջն է որ կնկդմի, նման այն թիւրաւոր ու անհամար տարիներու որոնք իրմէ առաջ անհետացած էին: Այո՛, սլացաւ ան վայրկեանի մը նման, ու մենք որ սովորաբար կարեւորութիւն չենք տար երբեք թռչող երկվայրկեաններու որոնցմէ կերտուած են մեր տարիներն ու մեր վաղանցուկ կեանքը, գէթ վայրկեան մը կանդ առնենք և մտածենք այն ահաւոր ու անմբռնելի ժամանակին ու անոր արագասլաց ընթացքին մասին:

1. Ժամանակին գերիշխան ազդեցութիւնը:

Արքայից ամենահզօրն է ան: Թէեւ չենք տեսներ անոր վրայ երկրաւոր արքայից ծիրանին, սակայն իշխան-

ներն ու պալատականները կ'իջնեն իրենց բարձրութենէն և կը խոնարհին անոր առջեւ: Անոր մականը թէեւ առանց գոհարի է, բայց ո՞վ կրնայ համարձակիլ ըսելու թէ պիտի չմտնէ անոր անեղ իշխանութեան ներքեւ: Կարծես թէ գիշերուայ լուսութեան մէջ գողի մը նման կը սողայ ու կը կողոպտէ վարդագեղ այտերու գոյնը և փողփողուն աչքերուն լոյսը: Դիտեցէք անոր հետքերը ծերունիին ճակատին վրայ. տեսէք հոն բացուած խոր ակօս. ներք, և ձիւնի փուռները անոր գլխուն վրայ: Կայտառ ու վառվռուն երիտասարդները կրնան ժամանակ մը արհամարհել անոր զօրութիւնը, սակայն չուշանար, ու չուտով կը հասնի այն ժամը երբ կը տեսնեն անոր տխուր տարաք իրենց տնձին վրայ ալ: Ան կ'առնէ մարմնոյն ոյժը, դէմքին թարմութիւնն ու գեղեցկութիւնը, բազուկին թափը, ծունկերուն զօրութիւնը, աչքերուն լոյսը, սրտին խանդն ու եռանդը: Կնճիւղներ կը հագնին ճակատն ու այտերը. այո՛, ժամանակն է որ իր ուզած ձեւն ու գոյնը կուտայ դէմքերուն ու մազերուն: Ու այսպէս ոչ թէ արտաքին աշխարհն է որ կը կրէ փոփոխութիւն մը, այլ մարդկային կեանքին աշխարհը: Ժամանակը նսեւ ցեցով ու ժանգով կ'ուտէ աշխարհիս գանձերը փոշիին ներքեւ կը թաղէ փառաշուք պալատները: Գոռոզ մարդը կը բարձրացնէ իր քաղաքները, իր

Այս տարի սոյն շարժման յոբելինական տարին է: Պիտի տօնուի ատիկա ամէն ո՛ր որ երկու հայ Աւետարանական կայ: Այն ատեն խորհրդածութեան առարկայ պիտի ըլլան շատ մը նիւթեր: Մեր կողմէն պիտի ուզենք որ յօրինուին նկատողութեան առնուէր սա՛կետը, քի արդեօք ո՛րքան հաւատարիմ մնացինք Շարժումին տուն տուող մարութ սկզբունքներուն:

Խ. Թ. Ս.

պալատներն ու տաճարները, բայց ժամանակը կը փչրէ մարմարիսնը և կը տապալէ անոնց սիւները:

2. Ժամանակը անդառնալի է:

Ժամացոյցին սլաքը մեզի ցոյց կուտայ անցնող երկվայրկեանը, ժամը կը հնչէ ու կ'անցնի, բայց ո՛ւր կ'երթան երկվայրկեանները, ո՛ւր կ'երթան ժամերն ու տարիները: Սենեակիդ խոր լռութեանը մէջ՝ երբ կը լռէ ամէն աղմուկ ու շշուկ, չե՞ս լսեր սուր չեչտերը ժամացոյցիդ «թիֆ թաֆ»ին, որ կարծես կեանքիդ չէնքին մէջ մէկն է որ մտած ու իր անտես ձեռքի հարուածներովը շարունակ կը քակէ ու կը փրցնէ քար մը այդ չէնքէն: Երբեք չե՞ս ունեցած օրեր, ժամեր և նոյնիսկ վայրկեաններ՝ այնքան զրուարթ, այնքան երջանիկ որոնցմէ պիտի չուզէիր որ արեւը իր մարը մտնէ ու օրը իրիկուն ըլլայ: Վաղուան օրն ալ միեւնոյն առաւօտն ու նոյն արեւը ունի, սակայն ոչ դուն նոյնն ես և ոչ ալ քու խորհուրդներդ նոյնը, քու ըզձանքներդ քու յոյսերդ կեանքին արեւն է որ կ'անցնի հապճեպ ու օրերը կ'ըլլան իրիկուն: 1945 տարին անցաւ, ու անգամ մըն ալ պիտի չերեւի մեր հորիզոնին վրայ: Սակայն ի՞նչ հաւոր խորհուրդ անոնց համար որոնք յիմարաբար կը կորսնցնեն ժամանակը ու անոր պատեհութիւնները և այլեւս չգտնելու համար զայն:

3. Ամէն ինչ անկայուն է հոս:

Մենք ճանապարհորդներ ենք միայն: Մեր շուրջը գտնուած ամէն ինչ ժամանակի հետ սահելով կը յիշեցնէ մեզ թէ տրագատուց կ'անցնինք և կը դիմենք մեր վախճանը, դէպի մեր յաւիտենական բնակարանը: Ամէն մէկ

ծագող առաւօտը, ամէն մէկ ստուերամած երեկոն, կ'անցնին ու երբեք կ'անգ չեն առներ, և կ'անցնին ոչեւս վերադառնալու: Բերկրալից գարունը, ամառը իր պտուղներով, աշունը իր ռսկեղէն հունձքերով, ձմեռը իր ձիւնեղէն պատմութեանով տեւական շարժման մէջ են, մինչ անոնք կ'անցնին տրագարար ամէն տարի, զանոնք միայն կ'ողջունենք, և անոնք յաւիտեան կը մեկնին մեզմէ: Մեր աչքերուն երեւցող ամէն ինչ կ'անցնի, սակայն իրականութեան մէջ այնպէս չէ, ընդհակառակը ամէն բան իր տեղն է անշարժ և անյարիր, ալ մենք ենք որ կ'անցնինք, իոյս կուտանք ու կը հեռանանք մեր ետեւ թողելով ամէն երեւոյթ, ամէն տեսարան...: Անողորմ է ժամանակը, իր հետը կ'առնէ ու կը տանի ինչ որ կը վերաբերի մեր կեանքին:

4. Չեմ կրնաք երկարել մեր բնակութիւնը հոս:

Անտեսանելի ձեռքը մեր Ամենակալ առաջնորդին մեզ անյուպաղ յուռաջ կ'ողղէ ու կը տանի դէպի յաւիտենականութիւն, երբիմ հակառակ մեր կամքին ու բողձանքներուն: Անոր անաստն կամքն է որ մեր վերջնական բնակութիւնը ըլլայ յաւիտենականութեան մէջ, և շուտով պիտի տանի մեզ ի վերջոյ մեր բնակավայրը: Մեր շուրջը ամէն ինչ ցոյց կուտայ թէ Անոր անյեղի նպատակն է որ այս անցաւոր և ունայն աշխարհէն մեկնինք: Ո՛ւր են մեր ան սիրելիները, սրտակից բարեկամները, որոնք անցեալ տարին մեր հետը սկսան առանց կարենալ հասնելու նոր տարին, անոնցմէ շատեր արդէն հող դարձան ու այլեւս չեն վերաբերի այս աշ-

խորհին, անոնց տխուր ու կսկծալի յիշատակը կը մնայ միայն մեր վերաւոր սրտերէն ներս իրական կարծուած այս կեանքը իր երազական երեւոյթներուն մէջ ինչ դառն պատրանքներ, ինչ ցուրտ սարսուռն տպաւորութիւն. ներ ունեցաւ... ՌՐՔ-ան դառն ու լեզի որցունքներ պղտորեցին մեր աչքերը: ՌՐՔ-ան անգոր կերպով յաճախ կը բռնենք ու կը փարինք մեր երկրաւոր ստացուածքներուն, և որ բացայայտ կ'երեւի թէ անոնցմէ ոչ մէկուն վրայ մեր ձեռքը կարող ենք դնելու յաւիտեանս վայելելու համար զոնոնք: Աւարկայէ առարկայ փութանակի կը տարուինք, սակայն ժամանակ իսկ չուրինք որեւէ բան մը մերը կոչելու: Երբեմն կ'ուզենք որ գեղեցկութիւնը միշտ մնայ ու զմայլինք անոր վրայ, բայց մինչ կը դիտենք... անոր վայելչութիւնը կ'անհետանայ: Համբաւը կը պսակէ մեզ իր թագով, բայց մինչ մեր սիրտերը ուրախութեամբ կը պատարի, կը յափշտակուի մեր ձեռքերէն, այլոց հետ գրօնելու համար: Հարցատութիւնը կուգայ մեզ պարարել և իր հաճոյքներուն կառքով պտտցնելու համար մեզ, և մինչ կ'ընդունինք իր առաջարկը ընդհուպ կ'արձակէ մեզ փորձելու համար մեզի նման քանի մը ուրիշ պոնդուխտներ որոնք կը ճաբորդեն դէպի յաւիտենականութիւն: Այսպէս նախախնամութեան անտեսանելի աջը մեզ ամէն առարկայէ մէկիկ մէկիկ կը բաժնէ ցոյց տալու համար թէ հոս չէ մեր հանգստավայրը: Մեր շուրջը կը գտնուին նաեւ այն խօսուն և թելադրիչ պատգամաւորները զորս Աստուած կը զրկէ ազդարարելու համար մեզի մեր մերձեցող մեկնումը այս ունայն աշխարհէն: Տկարութիւնը կը կանգնի մեր առջին իր դողդոջուն

անգամներով ու անգոր շունչովը յայտարարելու համար մեզի իր թոթով լեզուով թէ չուտով պիտի թողունք մեր այս ժամանակաւոր բնակարանը մեկնելու համար մեր «Հօրը տունը»: Հիւանդութիւնք — գործունեայ պատգամաւորներ — կը սլոնան մեր շուրջը պատմելու համար մեզի մեր վաղանցուկ կեանքին մասին, և մեր ականջներուն փսփսալու «յաւիտենականութիւն»: Ոհնր, անընկճելի զօրութեամբ զինուած, կը կենայ իրեն եղած յանձնարարութիւններով և անոր անձոնթ թուականներովը մեզ այս աշխարհէն հեռացնելու համար: Այո՛, հոս պիտի թողունք աշխարհի հաճոյքներն ու վայելքները, անոր քաղաքներն ու ժողովուրդները երթալու համար դէպի յաւիտենականութիւն: «Հոս մնայուն քաղաք չունինք». դէպի ո՛ր կը ճամբորդես ո՛վ ճանապարհորդ: Ո՛ր մոռնար որ Քրիստոս է ճանապարհը որ կը տանի «մեր Հօրը տունը». ուր գացած է մեզի համար բնակարաններ պատրաստելու: Հաւատա Անոր ու յաւիտեան պիտի ապրիս այդ երանելեաց բնակավայրին մէջ բոլոր սրբոց ու հրեշտակաց հետ:


Վեր. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

Առաքիւնութիւնն է այն մեծափառ քաղաքացիութիւնը զոր մարդ կրնայ թողուլ իր ժառանգորդներուն:

Այն մարդը որ կը պարծեցայ իր բրած բարեգործութեամբ, կը կորսնցնէ անոր պտուղը:

Մայրը կ'որօրէ օրունին մէջ, ոչ միայն իր զաւակը, այլ և իր ազգին բախը:

Ո՛Ձ, ՁԵՄ ԿՐՆԱՐ



Երփներանգ ու բուրեղ ՄԱՂԻԿՆԵՐ՝ սփռուած դաշտին մէջ, իւրաքանչիւր քայլափոխիս, կարծես զիս իրենց մօտ կը հրաւիրեն: Մինչ անոնց քովէն ու մէջէն կ'անցնիմ, հիացումի լոկ մէկ ալնարկս, բաւ է անոնցմէ գրաւուելու: Անոնք որքա՞ն հաճելի են իրենց տեսքովն ու բոյրովս: Սակայն իբրեւ իտալական ճամբորդ մը, առանց վայրկեան մը իսկ կանգ առնելու, կը մրմնջեմ ինքն իրենս ո՛չ. չեմ կրնար ձեր քով մնալ, թէեւ դուք անուշ կը բուրէք նաեւ աչքերուն շատ հաճելի տեսարան մը կը ներկայացնէք, սակայն ես կ'երթամ ուրիշ երկիր մը, ուր միշտ գարուն է. հոն ծաղիկները բնաւ չեն թառամիր: Այնտեղ՝ աշնան հովերը երբեք չեն փչեր. ո՛չ ալ ձմերուտն ցուրտը կամ ամառուան տապը գոյութիւն ունի: Հոն՝ ծաղիկները չա՛տ աւելի գեղեցիկ են: Ձէ՛, չեմ կրնար հոս մնալ երթալու եմ իմ վերին հայրենիքս, Երեմայի՛ն, սքանչելի՛ բուրաստանը: Ծամբու ասթէն ուղղուած մարմինս կ'ուզէ հանգչիլ կանաչագեղ մարգագետիններուն վրայ, դալար մայրիներու ստուերին ներքեւ, սակայն, չէ՛, փութալու եմ, իմ հանգրուանս հասնելու, ուր կան մշտադալար կենաց ծառը, Յայտ. 22:2, որոնց տերեւները որպէս բալաստան կը գործածուին: Ձեր պտուղներուն չեմ ցանկար, թէեւ տոչորուած լեզուս, անոնց զովարար հպումը կ'ուզէ: Ձէ՛, չեմ կրնար յագեցնալ ձեզ ճաշակելով, քոնզի իմ հայրենիքս ուր կ'երթամ ունի սքանչելի պաղատու ծառեր, որոնցմէ պիտի յագեցնայ քողցած հոգիս:

Ձուարթ քոչնիկներ՝ իրենց ներդաշնակ մեղեդիներով կը պարուրեն եթերը: Անոնք հոս ու հոն՝ առանձին, գոյգերով ու երամ երամ երգելով կը թռչնոտին: Անոնց մելանոյ համերգը կը հրապուրէ զիս ու միտտիք զգացումով մը լեցուած, հոն պահ մը կանգ առնելու ու զանոնք ունկնդրելու մտածումը կայծակի արագութեամբ կ'անցնի մտքէս, մեղուէ մը խայթուածի կակիծով, կը կոչեմ ո՛չ, չեմ կրնար ձեզ ունկնդրել, թէեւ քողցր է ձեր նուագը ու դիւթիչ, իմ տանջուած ու յոգնած միտքս կը բաղձայ ձեր համերգը կողողորուելու, սակայն աճապարելու եմ, իմ վերին հայրենիքս, ուր կան անճառելի նուագներ ու անպատմելի մեղեդիներ: Ձեր երգերը որքա՞ն փրկուն ըլլան իմ հոգիս չեն կրնար կազդուրել, ես կորօտ եմ Աստուածայինին, Հրեշտակայինին: Նուազատենչ հոգիս, անհամար նուագախումբերու սիրալիր վայրին մէջ պիտի յագեցնայ լսելով ու մասնակցելով սուրբերու նոր երգին: Յայտ. 5:9:

Օճապտոյտ գետերն ու վտակները իրենց ջինջ ջուրերովը ու միօրինակ գլգլանքներով ուշադրութիւնս կը զրուաւեն: Վիրաւոր ոտքերս, խոնջած մարմինս որքա՞ն կը ցանկան կանգ առնել հոն: Պասպակէս ցամքած լեզուս կը բողբոջէ և ջուր կ'ողաղակէ: Սակայն այս թովիչ տեսարանին առջեւ միտքս ու հոգիս կը բացականչեն միասնաբար. «Ո՛չ, ատիկա անհնարին է»:

Ո՛չ չեմ կրնար, ձեր զովարար ջինջ ջուրերուն քով մնալ, թէեւ դուք ձեր ճամբու ընթացքին կեանք ու օրհնութիւններ կը սփռէք, սակայն իմ յաւիտենականութեան համար ստեղծուած հոգիս պապակը չէք կրնար երբեք զոհացնել: Հոգիս կը բաղձայ անապա-

կան, յաւիտենական կենաց Հուրին: Այն՝ գերերջանիկ վայրը, դէպի ուր ես կը ճամբորդեմ, յատակ կենաց ջուրի ափը կը բխի: Այն գետին բիւրեղացած ջուրը պիտի յագեցնէ իմ ծառաս: Կոս՝ անկէ լոկ ումպ մը խմած ըլլալովս, յաւիտենական կեանքի տիրացած եմ: Յայտ. 22:1: Հոն՝ առատապէս պիտի վայելեմ, Սուրբ Գահուն շուրջ, ընկերակցելով անթիւ սուրբերու ու հրեշտակներու: Երանելի՛ հայրենիք, ուր կուշտ ու կուռ պիտի վայելեմ ականակիտ, զուլալ ջուրերու համերգը, սիրելիներով շրջապատուած:

Ահա՛ւասիկ, ականջիս կը հասնին խնճո՛յքի, հարսանիքի, խրախճանքի, հաճոյքի ճիչներ, քրքիջներ ու աղաղակներ: ՀԱՃՈՅՔԻ վայրերը լեցուն են պատանինքով, երիտասարդներով: Այս ճանապարհը ուրկէ անցնելու ըստիպուած եմ զբօսաւայր մը դարձած է: Ամէն կողմէն հրաւերներ կը լսուին, հաճոյքը աճուրդի հանուած է, «Ո՛վ պիտի վճարէ ամսնաբարձր գինը» կը կանչեն ունայնամիտները: Ո՛ր անմիտը ինքն իրեն համար կ'ուզէ որոգայթ լարել, որպէսզի յաւիտենապէս կորսուի: Ականջներս ու աչքերս գոցած, կ'ուզեմ յառաջանալ, ինքնիրենս կը միմնջեմ, չե՛, չեմ կրնար ասոնց քով մնալ. բոլորն ալ վաղանցիկ ու սին հաճոյքներ են: Հաճոյքի անձնատուր եղող ունայնամիտները, խաբէութեան որոգայթէն բռնուած որսեր, դարձած են: Իմ հոգիս այս զազիր ու ունայն հաճոյքներէն կը խորշի. անիկա չի կրնար գոհնալ ասոնցմով: Ձէ, դո՛ւք չէք կրնար հմայել իմ անմահ հոգիս, անիկա իր երջանկութիւնը կը փնտռէ յաւիտենականին, արժէքաւորին, անսեռանելիին մէջ: Կ'երթամ Երջան-

կավայր մը, ուր երբեք մուտք չէ գտած վիշտն, արցունքը ու մտմտութիւնը: Հոն կայ գերագոյն ցնծութիւնը: Հոն՝ յարերը տեղ չունին: Թայտ. 7: 15—17: Ես կը բողձամ յաւիտենական մնայուն ուրախութեան: Ձեզ սիրայօժար կը մերժեմ փրկչիս ներկայութիւնը վայելելու գերագոյն հաճոյքին համար:

Ճամբուս վրայ կը հանդիպիմ բազմազան զբօսում, որոնց արտաքին երեւոյթը, կը չլացնեն տեսութիւնս: Կը փորձուիմ կայնիլ գէթ պահ մը անոնց քով, թղթատել ու ընթերցման պապակա գոհացնել: Սակայն հոն կը տեսնեմ ազգանշան մը, որուն վրայ գրուած է «Ազո՛յ՛ս ընտրութեանդ» կը յիշեմ Մեծ Իմաստունին խօսքը, «Շատ գիրք կարդալը մարմինը կը յոգնեցնէ» անմիջապէս քայլերս յառաջ կը նետեմ Աստուածաւունջս պինդ սեղմած լանջքիս վրայ ու կ'ըսեմ, Ձէ՛, չեմ փափաքիր ձեր ընթերցումով ժամանակս սպաննել, մտքիս պայծառ ոլորտը պղտորել: Ձեր հրամցուցած օտար գաղափարները, վիպային պատմութեանները իմ կարօտութեանս բոլորովին անպատեհ են: Դո՛ւք զիս անել ճանապարհ առաջնորդող կեղծ բարեկամներու կը նմանիք. ինձմէ առաջ հոսկէ անցնող հաւատացեալներու հետքերը կը տեսնեմ ու անոնց իմաստուն խորատներուն անսալով, կը հեռանամ ձեր հմայիչ տօնավաճառէն: Իմ միտք Գիրքս բաւականաչափ առաջնորդ մըն է զիս ԵՐԱՆԵԼԵԱՅ երկիրը հասցնելու Սող. 119:105: Ան՝ է իմ սուրս դիմադրութեան պահուն. հոն կը գտնեմ ինծի պէտք եղած բոլոր խրատները նաեւ յաւիտենական կեանքի խոստումը: Ահա թէ ինչո՞ւ կը մերժեմ ձեզ ամէնդ:

Դարձեալ կը հանդիպիմ ԲԱՐՅ-
ԿԱՄՆԵՐՈՒ որոնք իրենց թաւային
ձայներով զիս կը կանչեն ու կ'ըսեն
«Կանգ ա՛ռ, մեզի հետ բնակէ՛, վայե-
լե՛նք աշխարհը»։ Որքա՛ն կ'ուզեմ
հանգչիլ, մարմինս կը բողբոջէ երկար
ճամբու խոնջեղէն։ Բարեկամ, ի՛նչ
քաղցր անուն . ո՛չ թշնամի, ինչ յիշատակ
կրնայ գալ բարեկամէ մը . ինչո՞ւ գէթ
օր մը չ'մնամ անոնց մօտ . միայնու-
թեան միօրինակ կեանքէն ազատ, գէթ
պահ մը չ'անցնեմ իրենց հետ։ Ահաւա-
սիկ հոգւոյս թշնամույն, ամենասուր և
ամենավերջին ծուղակն է ան . զոր
կ'ուզէ զիս մէջը ձգել . կը յիշեմ բա-
րեկամութեան քրեցուցիչ հիմալի թէ
անիկա ճամբորդները դարձուցած է
ուղիղ շաւիղէն ու անոնց կորստեան
պատճառ դարձած, անմիջապէս կուռկս
կը դարձնեմ, ևսիկա անկարելի՛ է, չե՛,
չեմ կրնար ձեր մօտ բոլոր մը իսկ
կայնիլ . թէեւ մարմինս կը տենչայ
ձեզի հետ մնալու, հոնգիստ վայելե-
լու . սակայն հոգիս կը պօգի ձեր ըն-
րակցութիւնէն, զիս մի՛ փորձէք . ես
աւելի, չա՛տ աւելի լաւագոյն ընկե-
րակցութեան կը բաղձամ։ Մօտեցա՛ծ
եմ, իմ քաղցրարժէք բնագաւառին,
որուն անուշ զեփուռը սկսած է ճա-
կատս զովացնել . Ձեր ընկերակցու-
թիւնը որքան ալ հաճելի ու անմեղ
նկատուի, տակաւին կը վախճամ կու-
մօքս մասնակցիլ . եթէ դուք իրապէս
երջանկութիւն կը փնտռէք բարեկա-
մութեան մէջ, ինձի հետ ընկերակցե-
ցէք . միասին երթանք վայելքներու,
բարեկամութեան սիրալիր վայրը։ Հոն
ուշիմ անզուգական բարեկամ մը,
Փրկիչ մը զոր հազարաց մէջ մէկ հա-
տիկ է ևն . հոգիս Ձայն կը բաղձայ .
Ձայն տեսնելու հաւատքով ու յոյսով
տողորուած եմ։ Ծամբու տաժանքը

անբողբոջութիւնը աւելի թեթեւ է
քան յաւիտենական անպատմելի փառ-
քը։ Դո՛ւք իմ պապակիս գոհացում
չէք կրնար տալ . ձեր սէրը ժամանակի
ու պարագաներու հետ սահմանաւոր-
ուած է . ձեր սիրոյն երբեք չեմ կրնար
վստահիլ։ Մինչ Փրկիչս աննման է իր
անսահման սիրովը։ Այո՛, Փրկչիս ղէմ-
քէն պիտի կշտնամ յաւէտ . սիրոյ
պապակիս յաւիտենականութեան կարօտ
է։ Հոն յագուրդ պիտի գտնէ բոլոր
կարօտութիւնս, Տէրօջաներկայութեա-
նը մէջ։

Լճու... կը լսեմ հեշտ մեղեդիներ՝
րը հրեշտակաց... անո՛ւշ բուրում մը
կը պարուրէ օդը։ Շա՛տ մօտ եմ բաղ-
ձալի ճանց։ Թմրութիւն մը կը պատէ
մարմինս . ահա՛ թեթեւ մրափ մը կը
գոցէ աչերս . կը վերջանայ ճամբոր-
դութիւնս։ Ո՛չ, չեմ կրնար կը մրմնջէ
կապկպուած լեզուս և վերջին շունչիս՝
երջանիկ մէկ պահուն, անլսելի ձայնով
մը։

«Ձեմ կրնոր»ի փոխարէն
Շրթունքներս անօրէն,
Նրդեմ բո՛ղ, Տե՛ր, յաղթութեան
Քաղցր, նոր երգը յաւիտեան։

Սալթ

Բ. Գ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

Այն գործը որ անձամբ կրնաս ը-
նել մի յանձնեմ ուրիշներուն։

Մեծ մարդիկ մեծ մայրերու զա-
ւակներ են։

Սուրբ կեանքը ձայն մը ունի, կը
խօսի երբ լուռ է լեզուն։

Արեւը անոնց միայն կենդանութիւն
կուսայ որոնք կեանք ունին։

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ



Գրեց՝ Th. Haarbeek

Այն գիրքը զոր մենք «Հին Կտակարան» կ'անուանենք, Յիսուսի ժամանակուայ նոյն Սուրբ Գրոց հաւաքածոն է, և որ հրեաները կը գործածէին. միայն թէ զայն կը կոչէին «Գիրքը» և կամ «Օրէնք, Մարգարէներ և Սողոմոն» (Ղուկ. 24. 44):

Հին Կտակարանի հանդէպ մեր բնած գիրքը այնպէս է, ինչպէս էր Յիսուսինը և Առաքեալներունը:

Յիսուս երբ Օրէնքին մասին կը խօսէր անգամ մը այսպէս ըսաւ. — «Մովսէս հրամայեց» (Մատթ. 8. 4): Ուրիշ առթիւ մը՝ «Աստուած պատուիրեց»: Երբ մարգարէութիւններէն մէջբերումներ կ'ընէր, կ'ըսէր. — «Եսայի մարգարէացում» (Մատթ. 15, 7): Նոյնպէս՝ «Որպէսզի կատարուի Տէրոջմէն ըսուածը մարգարէին ձեռքով» (Մատթ. 1. 22):

Քրիստոս անոր պաշտպան կը կանգնի՝ ըսելով. «Ճումարսպէս կ'ըսեմ ձեզի, մինչեւ երկինք ու երկիր անցնին Օրէնքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի» (Մատթ. 5. 18): Եւ՝ «Կարելի չէ որ այն գրուածը աւրուի» (Յովհ. 10, 35): Ան կը յանդիմանէր հրեաները և իր աշակերտները անոր համար, որ չէին հաւատար Մովսէսի և մարգարէներուն խօսքերուն (Ղուկ. 24, 25. Յովհ. 5. 46—47):

«Գրուած է» խօսքը Հին Կտակարանը կը դնէ Աստուածային ներշնչման և վճռականութեան բարձունքին վրայ: Ան՝ այն զէնքն է, որով Քրիստոս յաղթեց Սատանային: Ո՛չ միայն երեւելի աշխարհի մէջ, այլ նաեւ աներեւոյթ

աշխարհին համար Աստուծոյ «Գրուած» խօսքը վճռական հեղինակութիւն ունի. անկէ վեր ուրիշ վճռադատ անեմ մը գոյութիւն չունի:

Յիսուսի ժամանակակից դպիրները նոյն գիրքը ունէին Սուրբ Գրոց հանդէպ տեսականօրէն: Անոնք կառչած էին նոյնիսկ գրերով ներշնչման, սակայն չէին ապրեր անոր համեմատ, ուստի և այնպէս չէին ըմբռներ այն մարգարէութիւնները, որոնք մինչեւ իսկ իրենց ձեռքերով կը կատարուէին Յիսուսի վրայ երբ խաչը հանեցին զԱյն: Քրիստոս, ընդհակառակը, սոյն Սուրբ Գրոց հաւաքածոն, իր ամբողջ կեանքի ընթացքին, մինչեւ խաչին վրայ, գործածեց որպէս իր անձնական Սուրբ Գիրքը: Փորձութեան տեսն իր զէնքն էր անիկա, նեղութեանց մէջ՝ միտիթարիչը և իր քարոզած ճշմարտութեանց հիմք: Որպէս յստակ հայելի, անոր մէջ կը տեսնէր ինքզինքը որպէս Որդի Աստուծոյ, որպէս Մեսիա և որպէս Միջնորդ և Փրկիչ աշխարհի: Վերջին խօսքը զոր խօսեցաւ մահէն առաջ, Ս. Գիրքէն համար մըն էր: Այո՛, իր յաղթական յարութենէն յետո՛յ ալ իր մահուան անհրաժեշտութիւնը ապացուցուց նոյն Գրքէն. Ղուկ. 24, 25—28:

Ս. Գիրքը ներշնչող Ս. Հոգին Յիսուսի մէջ իր լիութեամբը կը բնակէր. այդ համեմատութեամբ ալ Ան Ս. Գրքէն վեր կը մնար, և որպէս անոր հեղինակը անոր պարունակութիւնները կը մեկնաբանէր. «Լսե՛ր էք որ ըսուեցաւ, ... բայց ես ձեզի կ'ըսեմ». Մատթ. 5, 13—47: Այս հեղինակութիւնը զինքը այնքան աւելի բարձր կը դասէ Մովսէսէն, որքան տունը չինոզը՝ տունէն. Եբր. 3, 3: Որով Գիրքին ամէն գիրը միեւնոյն

«ԵՐԱՆԵԼԻ ԵՆ ԱՅՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ՝ ՈՐՈՆԲ ՏԷՐՈՋՄՈՎ ԿԸ ՆՆՋԵՆ»



Դամասկոս 14 Նոյ. 1945 կիրակի
իրիկունն ժամը 4ին մեզի ամէնուս շատ
սիրելի, պատուական հայրս Եագուպ
Եղբ. Տաղլեան երջանիկ ու ցանկալի
մահուամբ ի Տէր ննջեց 53 տարեկան
հասակին մէջ. Անգութ մահը իր սառ
ձեռքը այս սիրելիին ալ ճակտին վրայ
դնելով բոժենց զինք իր արտահատոր-
ներէն. Այս վաղահաս ու անակնկալ,
դառնակսկիծ մահը մեզ ամէնս խոր
թախծով ցնցեց. իր մահուան նախօր-
եակին կ. վ. ժամը 5ին շատ սաստիկ

արժէքը չունէր իրեն համար. Օրի-
նակ, երբ փարիսեցիները կին արձա-
կելու մասին իր կարծիքը հարցուցին,
Ան տարբերութիւն մը դրու մովսիսա-
կան օրէնքին և Աստուծոյ սկզբնական
կամքին միջև, ըսելով. «Ակիզբէն այնպէս
չեղաւ». Մատթ. 19. 8 բաղդատէ Բ.
Օրինաց 24, 1ի հետ. Նմանապէս Յի-
սուս ինքզինք Շաբաթին ալ Տէրը
հոչակեց. Ղեւտական անմաքրութեանց
վերաբերեալ օրէնքները խափանեց իր
այն վարդապետութեամբը, թէ՛ միայն
մեղքը կը պղծէ մարդը. Մատթ. 15,
11.


Թիսուսի համար Ս. Գիրքը հոգի
և կեանք էր. Ան զայն գործածած է
միայն որպէս փրկութեան միջոց. Գի-
տական հարցերու և այլ հետաքրքրու-
թեանց համար, Անոր պատասխանը
այս է. «Առաջ խնդրեցէք Աստուծոյ
թագաւորութիւնը և Անոր արդարու-
թիւնը. Մատթ. 6. 33:

(Շարունակելի)

խիթ մը կը բռնէ զինք. և դաժան ու
աննուաճելի ցաւերու մէջ 24 ժամուայ
ընթացքին իր մարմնաւոր չարչարունք-
ներուն ու ցաւերուն հնոցին մէջ այլ-
եւս չտոկայով հրաժեշտ կուտայ այս
տառապանաց աշխարհին և սլանալով
յուստենականութեան սահմանները, կը
մանէ իր «Լօրը տուր», հրեշտակաց ու
սրբոց երկիրը, իր շատ սիրած ու բո-
լորանուէր սիրտով ծառայած ցանկալի
Փրկչին բերկրալից Արքայութեան,
խոր առգի մատենելով իր բոլոր սիրե-
լիները:

Հայրս իր խօսող վարքովը շատե-
րուն օրինակ եղած էր որպէս տիպար
հաւատացեալ քրիստոնեայ մը. իր
քաղցրաբարոյ բնաւորութեան պատ-
ճառաւ կը վայելէր ամէնուն սէրն ու
յարգանքը. իրեն կը փութային ընկե-
րային, ընտանեկան և եկեղեցական
կնճռոտ խնդիրներու մասին ոեւէ լու-
սաբանութիւն մը ստանալու համար. և
Աստուծոյ շնորհքով ու երկնատուր ի-
մաստութեամբ կարող կ'ըլլար անոնց
գոհացուցիչ պատասխաններ տալու.
Ուռովեալները իրեն կը վազէին հաշ-
տութեան եզր մը գտնելու համար, ու
իր խրատներով զիրենք հաշտուած ու
սիրով կ'արձակէր. Շատ համեստ, հե-
զահամբոյր, ազնիւ, մաքուր, բարձրա-
հոգի և անկեղծ քրիստոնեայ մը. Գը-
րիստոսանման հաւատացեալ մըն էր
կրնամ ըսել թէ իր վարուցը մէջ չին-
ծու և արուեստական ձեւեր երբեք
տեսնուած չէր. Անոր պարզ ու բնա-
կան շարժումներն ալ աւելի հաճելի
ըրած էին իր ընկերական բարեկիրթ
կենցաղավարութիւնը. Կռիւն ու ատե-
լութիւնը այս երանելի հաւատացեա-
լին համար կարծես նշանակութիւն
չունեցող օտար գաղափարներ էին.
Ամէնուն հեք սիրով ու խաղաղու-

թեամբ կը վարուէր: Իր նկարագիրը երանգուած էր բարութեան ազնիւ զգացումներով: Որպէս ճշմարիտ ու բոլորանուէր հաւատացեալ ծանօթ էր ամէնուն իր աղօթքի նուիրական կեանքովն ու Աստուծոյ խօսքին մասին ունեցած իր խորունկ հմտութեամբը, որով շատերուն մեծապէս գնահատանքին արժանացած էր: Ան ծառայող



Հանգուցեալ Տիար Եագուպ Սըբայր
Տաղեան

հոգի մը ունէր մանաւանդ հաւատքի ընտանիքէն եղողներուն: Կը սիրէր բոլոր Քրիստոսը սիրողները, և կ'ողէր ծառայել անոնց իր կարողութեան սահմանին մէջ: Ո՛րքան կ'ուրախանար երբ կը լսէր անձի մը ապաշխարութեան պարագան: Ուղղափառ հաւատքի ու Քրիստոսի դատին համար խիստ նախանձաւոր էր: Երբ լսէր թէ քրիս-

տոնէական հաւատքը յարձակում կը կրէ մէկու մը կողմէ, այս հրեշտակաւնման բարի մարդը կ'աժեռ տուէ մը կը կտրէր իր պաշտած սիրելի վարդապետին դատը պաշտպանելու համար:


Հայրս իր ընտանիքին տիպար ու արժանաւոր ամուսինն ու հայրն էր: Ես — իր անդրանիկ զաւակը — իմ ապաշխարութեանս և այս նուիրական գործը կեանքիս որպէս ասպարէզ ընտրելուս պարագաները կը պարտիմ ուղղակի իր հայրական գոհար խրատներուն և ինծի համար իր ըրած տեւական աղօթքներուն: Անձնուէր հայր մըն էր ան, իր շատ համեստ միջոցներով ջանացած էր իր զաւակներուն տալ կարելի եղածին չափ բարձր ուսում, և սոյն նպատակին իրադրոժման համար չի խնայեր ոեւէ միջոց, նոյն իսկ գիշեր ու ցորեկ անխոնջ ու անընդհատ աշխատելով անոնց դպրոցական ծախսերը հոգալու համար: Բայց ափսո՛ս որ առանց զիրենք երկարօրէն վայելելու մահով բաժնուեցաւ անոնցմէ:

